ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 հունվարի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

6
(2856)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՇԽՈՒԺՈՒԹՅՈՒՆԻՑ Է ԽՈՍՈՒՄ ՈՒ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴՌՆԵՐ ՓԱԿՈՒՄ

ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը վերջին օրերին տարբեր գրառումներ է կատարում ու այն վերնագրում՝ «Մի լավ բան»: Մասնավորապես, երեկ գրել էր. «Մի լավ բան #4:

Հայաստանում կյանքը շատ է աշխուժացել նաեւ Երեւանից դուրս: Վերջերս հաճախ եմ եղել մարզային դատարաններում ու մեր բազմաթիվ բնակավայրերում տեսել եմ բարեկարգված փողոցներ ու պուրակներ, նորոգված կրթօջախներ ու հիվանդանոցներ, նորաբաց հյուրատներ ու բիզնեսներ»:

Զարմանալի է, որ ԲԴԽ նախագահը Երեւանից դուրս մարզերի աշխուժությունից է խոսում, բայց անձամբ մարզերի դատարանների դռներն է փակում ու աշխուժությանը հակառակ գործելաոճ դրսեւորում: Բազմաթիվ քաղաքացիներ ահազանգում են, թե ինչպես են մարզերում դատարանների դռները փակվում, ինչի հետեւանքով իրենք հարյուրավոր կիլոմետրեր են իրենց բնակավայրից կտրում անցնում դատարան հասնելու համար:

Դատական դեպարտամենտը պաշտոնապես հայտնում է, որ Դատական դեպարտամենտի քննարկումների արդյունքում որոշում է կայացվել Հայաստանի ամբողջ տարածքում գործող 51 դատարաններից 9 նստավայրերի փակման վերաբերյալ (Աշոցքի, Տաշիրի, Թալինի, Արթիկի, Մարտունու, Վեդու, Եղեգնաձորի, Սիսիանի եւ Մեղրիի):

Նշված նստավայրերից Աշոցքում եւ Մեղրիում տեւական ժամանակ չի եղել մշտապես տեղակայված դատավոր, բայց այդ դատարանի շենքերում կատարվել են կոմունալ եւ պահպանության ծախսեր, իսկ դատական ծառայողները պետական բյուջեից ստացել են աշխատավարձ, բայց մատնված են եղել մասնակի կամ ամբողջական պարապուրդի:

Այս որոշման արդյունքում պետությունը կխնայի տարեկան շուրջ 200 միլիոն ՀՀ դրամ:

Հարց՝ իսկ ո՞վ է մեղավոր, որ դատական համակարգի աշխատողները պարապուրդի են մատնված եղել, բայց աշխատավարձ են ստացել, դատավոր չի եղել Աշոցքում ու Մեղրիում. իհարկե, դատական համակարգի պատասխանատուները՝ի դեմս ԲԴԽ նախագահի: Իսկ հիմա ստացվում է՝ պետությունը խնայում է, իսկ քաղաքացին՝ տուժում:

Ավելին՝ փակված դատարանների աշխատակիցներն ու դատավորները հակառակն են պնդում. աշխատել են մյուս դատարանների նման ու հավասար գործեր են քննել: Մեր հետաքննությունը շարունակվում է, եւ առաջիկայում կանդրադառնանք փակված դատարանների իրական պատճառներին:

Ամենաթողությունն ու անպատժելիությունը վերացնելու խոստումով իշխանության եկած թավշյահեղափոխականների օրոք այս արատավոր երեւույթները գնալով ծաղկում են: Իրավապահ մարմինները խստորեն պատժում են օրենք խախտած ընդդիմախոսներին, բայց մեծ սիրով աչք են փակում իշխանության ներկայացուցիչների թույլ տված հանցանքների վրա: Այսպիսով, «Իրազեկ քաղաքացիների միավորում» հ/կ-ի ծրագրերի համակարգող Դանիել Իոանանիսյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնել է, որ հանցագործության մասին հաղորդում են ներկայացրել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի՝2023թ.-ի ապրիլի 2-ին տեղի ունեցած՝ քաղաքացու վրա թքելու աղմկահարույց միջադեպի մասով, ինչպես նաեւ ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի՝նախորդ տարի ապրիլի 4-ին ՄԻՊ թեկնածու Էդգար Ղազարյանի հասցեին հնչեցրած սպառնալիքների մասով, սակայն իրավապահ մարմինները երկու դեպքով էլ քայլ չեն ձեռնարկել, ու քրեական հետապնդում չի հարուցվել իշխանության ներկայացուցիչների նկատմամբ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Իրազեկ քաղաքացիների միավորում» հ/կ-ի ծրագրերի համակարգող Դանիել Իոանանիսյանը պնդում է՝ Հայաստանում ընտրովի արդարադատություն կա: «Թե՛ Ալեն Սիմոնյանը, թե՛ Արթուր Հովհաննիսյանը կատարել են քրեական օրենսգրքով արգելված արարք եւ պետք է քրեական հետապնդման ենթարկվեն, բայց արդարադատության մարմինները՝ի դեմս ՔԿ-ի, Դատախազության եւ դատարանների, խախտելով օրենքը, ապօրինի պաշտպանության տակ են վերցրել Արթուր Հովհաննիսյանին եւ Ալեն Սիմոնյանին: Այս ամենին կգումարեմ նաեւ Տիգրան Ավինյանի՝ընտրությունների ժամանակ տեղի ունեցած դեպքը, երբ նա գնաց Պոլիտեխնիկական համալսարան. այս մասով էլ ենք հաղորդում ներկայացրել, եւ կրկին քրեական հետապնդում չհարուցվեց: Այս դեպքերը գալիս են ցույց տալու, որ Հայաստանում ընտրովի արդարադատություն կա»,-ասաց Իոանանիսյանը:



Գաղտնիք չէ, որ խոսքի ազատության շեմը վերջին հինգ տարիներին նվազել է լրագրողների եւ իրենց աշխատանքի նկատմամբ գործադրված ճնշումների միջոցով: Այդ ճնշումներն հաճախ այնքան են սաստկանում, որ որոշ լրատվամիջոցներ, լրատվական գործակալություններ եւ առանձին լրագրողներ դիմում են դատական համակարգ կամ լրագրողական կազմակերպությունների՝ինքնապաշտպանության համար: «Ժողովուրդ» օրաթերթը համեմատական է անցկացրել՝ վերջին տարիներին ինչպես է փոփոխվել լրատվամիջոցների եւ լրագրողների դեմ կամ մասնակցությամբ դատական գործերի քանակը: 2023 թ.-ին Հայաստանում ընդդեմ լրատվամիջոցի եւ լրագրողների դատական գործերը կազմել են 36-ը՝2022 թվականի համեմատ աճելով 4 դատական գործով: Վերջին մի քանի տարիներին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը, որը վերաբերում է վիրավորանքին եւ զրպարտությանը, կայուն ակտիվությամբ կիրառվում է լրագրողների դեմ հայցեր ներկայացնելու համար: Նախորդ տարի դատական հայցերից 34-ը վերաբերում են հենց այս հոդվածին, մյուս երկուսը տնտեսական կամ այլ վեճերի հիմքով են: 2019 թվականին դատարաններ է ներկայացվել ԶԼՄ-ներին ու լրագրողներին վերաբերող 94 հայց, 2020-ին՝82: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախորդ՝2013 եւ 2014 թվականների նմանատիպ հետազոտությունների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ վիրավորանքի եւ զրպարտության հիմքով գործերի քանակը գրեթե 3 անգամ ավելացել է: Բանն այն է, որ ներկայիս իշխանությունները, որոնց հիմնական կորիզը լրատվական դաշտի նախկին ներկայացուցիչներ են, սեփական գործընկերների դեմ դավեր են նյութում, նրանց դեմ հայցեր ներկայացնում: Հենց նախկին լրագրողները երկրի ղեկավարի հետ միասին փորձում են փոփոխություններ իրականացնել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որը նրանց թույլ կտա սահմանափակել տեղեկատվություն տրամադրելու ինֆորմացիաների տեսակները: Այսինքն՝օրենքի նախագծի ընդունման դեպքում կառույցները կարող են տալ այն տեղեկատվությունը, որն ուզում են, իսկ որը նպատակահարմար չեն գտնի, չեն տրամադրի: Նման քայլերով ամեն ինչ արվում է՝ լռեցնելու անկախ մամուլին, եւ ճնշելով փորձ է արվում սահմանափակել նրանց աշխատանքը գաղտնիության պայմաններում: Հանրային հաշվետվողականությունը նվազում է:

ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի դեմ հարուցված քրեական գործով՝ Արեգասարի բարձունքի հանձնման գործընթացի քննության շրջանակներում, պետք է հակակոռուպցիոն դատարան հրավիրվի նաեւ «Եղնիկներ» զորամասի հրամանատար, Արցախի հերոս Կարեն Ջալավյանը՝ Քյոխը: Գործը քննվում է դռնփակ դատական նիստի շրջանակներում: Հիշեցնենք, որ Միքայել Արզումանյանը մեղադրվում է 2020 թվականի հոկտեմբերի 30-ից մինչեւ նոյեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում իր ծառայողական պարտականությունների նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսեւորելու համար, ինչի հետեւանքով, ըստ Քննչական կոմիտեի, հակառակորդի զինված ուժերն ամբողջությամբ իրենց վերահսկողության տակ են վերցրել Շուշի քաղաքը եւ մատույցները, հայկական ստորաբաժանումներն ունեցել են զոհեր եւ վիրավորներ:

ԶՐՈՒՅՑ

«ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆԸ ՇՏԿՈՒՄ ԵՆ ԲԱՐԵԽԻՂՁ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ»

Կառավարության որոշմամբ՝ հունվարի 18-ին Լոռու մարզպետ նշանակվեց Արամ Ղազարյանը:

Արամ Ղազարյանը 2016թ.-ից եղել է ոստիկանության Լոռու մարզային վարչության պետը, ապա նույն պաշտոնը զբաղեցրել է Գեղարքունիքի մարզում, իսկ հետո՝ մինչեւ անցած տարի, Շիրակի մարզում ղեկավարել է ոստիկանության մարզային վարչությունը: Այնուհետեւ նա նշանակվել է «Երեւան ՋԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

ArmLur.am-ը մի քանի հարց է ուղղել Արամ Ղազարյանին:

-Պարոն Ղազարյան, նախկին մարզպետ Արամ Խաչատրյանի պաշտոնանկությունից հետո Նիկոլ Փաշինյանը երկար ժամանակ փնտրտուքների մեջ էր, մարզպետի թեկնածու չէր գտնում: Ինչպե՞ս ընտրությունը հենց Ձեզ վրա կանգ առավ:

-Այնպես չէ, որ երկար ժամանակ փնտրտուքների մեջ են եղել. եթե ժամանակային առումով նայեք, այդքան էլ երկար ժամանակ չի անցել, այնպես չէ, որ ցանկացած պաշտոնի նշանակում հենց հաջորդ օրը լինում է: Իսկ թե ինչու են կանգ առել հենց իմ թեկնածության վրա, դրա համար կա ղեկավարություն. հարմար են գտել, որ հենց ես լինեմ մարզպետ՝ գուցե հաշվի առնելով իմ աշխատանքային փորձը եւ մարզում աշխատած տարիները:

-Նիկոլ Փաշինյանը վերջին շրջանում մարզպետների պաշտոնանկության շքերթ է սկսել. այցելում է մարզեր, դժգոհում մարզպետների աշխատանքից ու հեռացնում նրանց: Մտավախություն չունե՞ք, որ որոշ ժամանակ հետո հերթը Ձեզ էլ կհասնի:

-Ես ամեն ինչ անելու եմ՝ իմ աշխատանքը պատվով կատարեմ, իսկ պաշտոնանկության մասով՝ ցանկացած պետական պաշտոնյա մի օր նշանակվում է, մի օր՝ ազատվում: Երբ այդ օրը գա, ես ցավով չեմ տանի:

-Պարոն Ղազարյան, ինչպես նկատում ենք, իշխանությունը նոր քաղաքականություն է որդեգրել. պաշտոնների նշանակում է նրանց, ովքեր ՔՊ կուսակցության անդամ են հանդիսանում: Դուք ՔՊ անդամ չեք, պատրաստվո՞ւմ եք կուսակցության անդամ դառնալ

-Նմանատիպ առաջարկ չի եղել. երբ լինի, անպայման կտեղեկացվեք:

-Լոռի կատարած իր վերջին այցի ժամանակ Նիկոլ Փաշինյանը շատ թերություններ արձանագրեց մարզում, ինչի պատճառով էլ նախկին մարզպետին պաշտոնանկ արեց: Ինչպե՞ս եք այդ թերությունները շտկելու:

-Ցանկացած դժգոհություն շտկում են բարեխիղճ աշխատանքով ու նվիրվածությամբ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԿԱՐՈՂ Է ՉԵՂԱՐԿԵԼ ԷՄԲԱՐԳՈՆ ⇨

ՀՅԴ Հայ դատի Կանադայի հանձնախմբի մոտ հիմնավոր մտահոգություն է առկա առ այն, որ Կանադան կարող է չեղարկել Թուրքիայի նկատմամբ սահմանված՝ ռազմական արտադրանքի վաճառքի էմբարգոն:

Ինչպես նշվում է ՀՅԴ բյուրոյի հայ դատի կենտրոնական գրասենյակի տարածած հաղորդագրության մեջ, այս քայլը կարող է ձեռնարկվել Շվեդիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու գործարքի շրջանակում:

«Թուրքիայի նկատմամբ կիրառվող զենքի էմբարգոյի վերացումը հատկապես վտանգավոր է կանադաթուրքական ռազմական առեւտրի վերջին սկանդալային բացահայտումներից հետո, երբ 2019թ. պաշտոնական Օտտավան թույլատրել էր անօդաչուներում կիրառվող L3Harris/WESCAM տեխնոլոգիաների վաճառքը Անկարային, ինչը հանդիսանում էր «Բայրակթար» անօդաչուների մրցունակությունն ապահովող առանցքային դետալներից մեկը: Հետագա հետաքննությունն ապացուցել էր այդ տեխնոլոգիաների փոխանցումը Ադրբեջանին, ինչն արգելված էր: Բացահայտվել էին թուրքական այլ զեղծարարություններ եւս: Մասնավորապես, կանադական տեխնոլոգիան, համապատասխան թուրքական դիմումի, ենթակա էր կիրառման ոչ թե հարձակողական, այլ հետախուզական անօդաչուների համար: Պետական այս հետաքննությունից հետո կանադական կողմը Հայ դատի Կանադայի հանձնախմբի աշխատանքների արդյունքում Թուրքիայի նկատմամբ կիրառեց ռազմական արտադրանքի վաճառքի էմբարգո:

ՀՅԴ Հայ դատի Կանադայի հանձնախմբի դիրքորոշմամբ՝ Կանադան չպետք է մեղսակից լինի թուրք-ադրբեջանական ռազմական հանցագործություններին՝ նպաստելով նրանց ռազմական զինանոցների ընդլայնմանը: Խարդախ մտադրություններ ունեցող պետություններին զենքի վաճառքը խախտում է Կանադայի զենքի արտահանման կանոնները՝ զգալի վտանգ ներկայացնելով տարածաշրջանային կայունությանը: Տարածաշրջանային խաղաղության եւ անվտանգության պահպանման եւ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ Կանադայի հայտարարած առաջնահերթություններին համահունչ՝ Օտտավան պետք է չչեղարկի զենքի վաճառքի էմբարգոն:

Հաշվի առնելով թուրքական նախկին զեղծարարություններն ու զենքի ձեռք բերման կանոնների խախտումները, ինչպես նաեւ Թուրքիայի կողմից ՀՀ տարածքային ամբողջականության ու ինքնիշխանության հանդեպ սպառնալիքները՝ Հայ դատի հանձնախումբը Կանադայի կառավարությանը կոչ է անում ցուցաբերել առավելագույն զգուշություն եւ առաջնահերթություն տալ տարածաշրջանային կայունությանը, խաղաղությանը եւ մարդու իրավունքներին»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՑԱՆԿԱՑԱԾ ԽԱԽՏՈՒՄ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԿԼԻՆԻ

Բրյուսելում ավարտվեց ԵՄ արտգործնախարարների խորհրդի նիստը, որի ընթացքում բազմաթիվ հարցերի շարքում քննարկվել են նաեւ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունները:

Նիստի ավարտին ԵՄ արտաքին հարաբերությունների բարձր հանձնակատար Ժոսեպ Բորելն ասուլիսին նշեց՝ ԵՄ անդամ պետությունները համաձայն են այն մտքի հետ, որ Ադրբեջանը պետք է վերադառնա Հայաստանի հետ առարկայական խաղաղության եւ հարաբերությունների կարգավորման բանակցություններին:

«Նախագահ Ալիեւի վերջին տարածքային պահանջները խիստ մտահոգիչ են: Հայաստանի տարածքային ամբողջականության ցանկացած խախտում անընդունելի կլինի եւ լուրջ հետեւանքներ կունենա Ադրբեջանի հետ մեր հարաբերությունների համար», - նշեց Ժոսեպ Բորելը:

ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԿՀԱՐՑԱՔՆՆՎԻ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն դատարան որպես վկա է հրավիրվելու հարցաքննության Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը: Նշենք, որ իրավապահներն այդ քրգործով կալանավորել են Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Տիգրան Ռաֆիկի Մարտիրոսյանին, նույն բաժնի առաջատար մասնագետ Արման Նվերի Հարությունյանին: Ըստ նախաքննական մարմնի պաշտոնական տեղեկության՝ վերջիններս նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, ունենալով տեղական ինքնակառավարման մարմնի անունից հանդես գալու լիազորություն, ինչպես նաեւ նույն մարմնի անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ, հանդիսանալով պաշտոնատար անձինք, Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի՝ հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքներն իրականացնող «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության տնօրեն Կամո Գերասիմի Գեւորգյանի նկատմամբ իրենց ծառայողական լիազորությունների իրականացման հետ կապված ընդհանուր բերեհաճ վերաբերմունքի համար 2023 թվականի հուլիսի 11-ին Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի աշխատակազմի վարչական շենքում Կամո Գեւորգյանից ստացել են խոշոր չափերով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ կաշառք-գումար, որը վերջինս անձամբ տվել է Տիգրան Մարտիրոսյանին, որը ստացված կաշառք-գումարից 150.000 դրամը հաջորդ օրը փոխանցել է Արման Հարությունյանին: Նկատենք, որ նախաքննական մարմինը պատասխանատվության չի կանչել Կենտրոնի թաղապետ Սամվել Ղուկասյանին այն բանի համար, թե ինչպես եղավ, որ նրա ենթակաները, առանց իր իմացության, նման պատժելի քայլի գնացին:

«ԼԱՎ ԵՔ, ԷԼԻ՛...»

«Freenews-ը չի պատկանում ո՛չ ինձ, ո՛չ իմ կնոջը. դրա մասին տեղեկությունը բաց է եւ ցանկության դեպքում բոլորին հասանելի»,- տելեգրամյան իր էջում գրել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

«Իսկ Հայաստանի Հանրապետությունում վաղուց արտոնյալներ չկան, եւ հենց այն փաստը, որ նախարարությունը մի շարք լրատվամիջոցների շարքում գործընթաց է իրականացրել նշված մեդիայի նկատմամբ, դրա վառ ապացույցն է: Բայց, դե, հասկանալի է, որ ավելի գրավիչ է Ալեն Սիմոնյանի անունից «կախվել», որ նախ՝ շատ մարդ կարդա, երկրորդը՝ իշխանությանը ներկայացնել՝ որպես հին բարքեր կրողի:

Սպասենք այլ նմանատիպ վերնագրերի եւ շահարկումների:

Օրինակ՝ «Հացի խանութը որտեղի՞ց. Ալեն Սիմոնյանը հաց է գնել, չի մուծում հարկերը», կամ՝ «Ալեն Սիմոնյանի՝ Ռուանդա այցից հետո ձյան առատ տեղումներ են սկսվել. կփակվի՞ արդյոք Լարսի անցակետը»:

Լավ եք, էլի՛.. Դուք ուրիշ հերոսի անուն չգիտե՞ք»,- գրել է նա:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր, որ ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանը պատժամիջոց է կիրառել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի կնոջ հեռուստաընկերության՝ Freenews-ի նկատմամբ:

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԴԵՍՊԱՆ

ՀՀ նախագահի հրամանագրով՝ Աննա Աղաջանյանը նշանակվել է Ֆինլանդիայում, Նորվեգիայում, Իսլանդիայում եւ Դանիայում ՀՀ դեսպան:

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը, համաձայն Սահմանադրության 132-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 14-րդ հոդվածի՝

Շվեդիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Աննա Աղաջանյանին, համատեղության կարգով, նշանակել Ֆինլանդիայի Հանրապետությունում, Նորվեգիայի Թագավորությունում, Իսլանդիայում եւ Դանիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Ստոկհոլմ)»,- նշված է հրամանագրում:

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը Նյու Յորքում հանդիպել է Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանի հետ:

ՌԴ ԱԳՆ հաղորդագրության համաձայն՝ կողմերը քննարկել են երկկողմ առեւտրատնտեսական համագործակցության արդիական հարցեր, էներգետիկ ոլորտում ռուս-թուրքական առանցքային նախագծերի իրականացման ընթացքը եւ առաջիկա երկկողմ շփումների ժամանակացույցը:

ՆԻՍՏ ԵՆ ԱՐԵԼ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Արցախի խորհրդարանը նախորդ շաբաթ՝ չորեքշաբթի օրը, փակ նիստ է արել:

Ինչպես մեզ փոխանցեցին, քննարկվել է բռնի տեղահանված արցախցիների խնդիրների լուծմանն ուղղված հարցեր, ինչպես նաեւ ընդունվել է նաեւ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը:

Ըստ գործող օրենքի՝ աշխատավարձի կուտակային գումարները, որոնք քաղաքացիները կարող են ստանալ կոնսաթոշակի անցնելուց հետո, համապատասխան փոփոխություններից հետո արդեն կարող են կուտակային գումարները ստանալ ավելի սեղմ ժամկետում՝ մինչ թոշակի անցնելը:

Մեր տեղեկություններով՝ Արցախի ԱԺ նիստը բավականին երկար է տեւել, բոլոր պատգամավորները ներկա են եղել նիստին:

ՄԵՐԺՈՒՄ ԵՆ ՊՆԴՈՒՄՆԵՐԸ

«Վճռականորեն մերժում ենք Եվրամիության արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ, ԵՄ հանձնաժողովի փոխնախագահ Ջոզեպ Բորելի կողմից 2024 թվականի հունվարի 22-ին Ադրբեջանի դեմ հնչեցրած անհիմն պնդումները միջազգային հարաբերությունների խորհրդի արդյունքների վերաբերյալ մամուլի ասուլիսի ժամանակ». այս մասին ասվում է Ադրբեջանի ԱԳՆ մամուլի ծառայության ղեկավար Այհան Հաջիզադեի մեկնաբանության մեջ:

«ԵՄ բարձր ներկայացուցչի կողմից փաստերի ակնհայտ խեղաթյուրումը արհամարհանք է Ադրբեջանի լեգիտիմ շահերի նկատմամբ, եւ նման սպառնալից հռետորաբանությունը երկակի ստանդարտի վառ օրինակ է, որն էլ ավելի է սրում Ադրբեջանի եւ ԵՄ-ի հարաբերությունները», - ասված է հայտարարության մեջ:

ԱՍՈՒԼԻՍ

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ՉԿԱ». Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

«Հայաստանի Հանրապետությունը շարունակում է հավատարիմ մնալ Հարավային Կովկասում խաղաղություն հաստատելու գործընթացին, չնայած Ադրբեջանի հետ առկա են բազմաթիվ խնդիրներ»,- երեկ՝ մամուլի ասուլիսի ժամանակ, ասաց արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

«Տեսականորեն խաղաղության գործընթացը տեղի է ունենում թշնամիների միջեւ: Ակնհայտ է, որ կա երկարամյա թշնամանքի պատմություն, եւ դեռ գերիներ ունենք, բազմաթիվ դեպքեր ունենք, երբ մարդկանց ճակատագրերը պարզապես անհայտ են, այդ թվում՝ 32-ը լավ հիմնավորված բռնի անհետացումների դեպքեր են: Խնդիրներն իսկապես բազմաթիվ են, եւ եթե այդ խնդիրների գույքագրում փորձենք իրականացնել, ապա դա, գուցե, մեծ հաշվով Ադրբեջանի քաղաքական կամքի բացակայությունն է: Համենայնդեպս, մենք այդպես կարող ենք դատել հնչող հայտարարություններից եւ Ադրբեջանի նախագահի վերջին գնահատականներից:

Այո, ունենք տպավորություն, որ կարգավորման համար քաղաքական կամք Ադրբեջանում չկա, այլ հակառակը՝ կա խնդիրներն ավելի սրելու, սահմանազատման գործընթացում խոչընդոտներ հարուցելու ցանկություն»,- ընդգծեց Միրզոյանը:

ԱԳ նախարարի խոսքով՝ հայկական կողմը բոլոր ուղղություններով տեսնում է պայմանավորվածություններից հետ կանգնում Ադրբեջանի կողմից:

«Բայց Հայաստանի Հանրապետությունը շարունակում է հավատարիմ մնալ խաղաղության գործընթացին, եւ մեծ հաշվով խաղաղության գործընթացը հենց այս խնդիրների լուծման նպատակ ու առաքելություն ունի»,- հայտարարեց Միրզոյանը:

Նախարարը նշեց, որ Հայաստանն ու Ադրբեջանը հարաբերությունների կարգավորման գործընթաց սկսելուց նախապայմաններ չեն ներկայացրել միմյանց:

Արարատ Միրզոյանը կարծիք հայտնեց, որ աշխատանքային գործընթացի ընթացքում հնարավոր կլինի լուծել առկա բոլոր խնդիրները՝ հավելելով, որ հակառակ դեպքում չի ստացվի խաղաղության պայմանագիր կնքել:

«Հայ-ադրբեջանական սահմանին էսկալացիայի հավանականություն այժմ էլ առկա է»,- ասաց նախարար Միրզոյանը՝ անդրադառնալով հարցին, թե արդյոք ԱՄՆ նախագահական ընտրությունների եւ ԵԽ-ում ընտրությունների պարագայում լարվածության հավանականությունը կաճի, երբ միջազգային գործընկերները կենտրոնացած կլինեն ներքին օրակարգի վրա:

«Ես կարծում եմ, որ էսկալացիայի հավանականությունն այս պահին էլ առկա է: Առնվազն այն հռետորաբանությունը, որին ականատես եղանք Ադրբեջանի նախագահի հարցազրույցում, թույլ չի տալիս մեկ վայրկյան անգամ թուլացնել մեր զգոնությունը»,-ասաց Միրզոյանը:

ԱԳ նախարարը նշեց՝ Ալիեւի հարցազրույցում հնչել են ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ անթաքույց տարածքային պահանջներ: «Մենք տեսանք, թե ինչպես են Հայաստանի այս կամ այն քաղաքները կամ մարզերն անվանվում ձեւախեղված ձեւով, մեծ հաշվով ամբողջ Հայաստանի Հանրապետությունն անվանվում Արեւմտյան Ադրբեջան: Էսկալացիայի հավանականությունը միշտ էլ կա: Արդյո՞ք այդ հավանականությունը կմեծանա տարբեր երկրներում տեղի ունեցող ընտրությունների ընթացքում. կարծում եմ, որ ռացիոնալ կլինի այդպես մտածել»,- նշեց ԱԳ նախարարը:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԿԱՆ

Վաշինգտոնը հետաքրքրված է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացն ավարտին հասցնելու հարցում՝ երկու կողմերի հետ համակարգմամբ:

Այս մասին հայտնել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակի տեղակալ Վեդանտ Պատելը՝ անդրադառնալով Վաշինգտոնում Երեւանի եւ Բաքվի միջեւ բանակցություններ վարելու՝ ԱՄՆ-ի ցանկությանը:

«Դրանում հետաքրքրված են ԱՄՆ-ն եւ պետքարտուղարը, եւ մենք ջանասիրաբար աշխատելու ենք, որպեսզի հասնենք վերջնագծին՝ Հայաստանի եւ Ադրբեջանի, ինչպես նաեւ այս հարցի շուրջ աշխատող մյուսների, այդ թվում՝ Լուիս Բոնոյի (խմբ.ԱՄՆ պետքարտուղարի կովկասյան բանակցությունների գծով ավագ խորհրդական) հետ համակարգմամբ», - ասել է Պատելը ճեպազրույցի ընթացքում:

Ինչ վերաբերում է Ղարաբաղյան հակամարտությունը Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հետ քննարկելու համար Վաշինգտոնում նախատեսված բանակցություններին, Վեդանտ Պատելը նշել է, որ առայժմ հստակ պայմանավորվածություններ չկան:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱՆ

2023 թ. Արցախի հայաթափումից հետո ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում բնակություն է հաստատել 704 բռնի տեղահանված արցախցի: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասել է համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Էդգար Պետրոսյանը:

«Այս պահի դրությամբ Վարդենիսում բնակվում է 704 արցախցի /224 ընտանիք/: Թվերն անընդհատ փոփոխվում են՝ կախված գրանցումից դուրս գալու եւ նոր գրանցում կատարելու հետ: Հիմնականում նախընտրում են այնտեղ բնակվել, որտեղ աշխատանք կա, եւ կարող են աշխատել ու հոգալ սեփական կարիքները: Շատ օպերատիվ կերպով կազմակերպել եւ լուծել ենք համայնքում նրանց՝ առանձին տներում բնակության հարցը: Եթե Վարդենիսում առաջին երկու օրն ունեցել ենք հյուրատներում խմբերով ապրող բռնի տեղահանվածներ, ապա երրորդ օրն արդեն համայնքը չի ունեցել այդ խնդիրը: Իհարկե, որոշները վարձով են ապրում, իսկ որոշներն էլ համայնքի բնակիչների կողմից անվճար տրամադրված տներում են բնակվում: Վարդենիսում եւս արցախցիներն ապահովվել են զբաղվածությամբ: Համայնքի հնարավորությունների չափով, որտեղ որ ազատ աշխատավայրեր են եղել, բռնի տեղահանված մեր հայրենակիցները դիմել են եւ ընդունվել աշխատանքի: Շատերն արդեն սկսել են զբաղվել անասնապահությամբ»,- ասաց Էդգար Պետրոսյանը:

Մեր զրուցակիցը մեզ հետ զրույցում նշեց նաեւ, որ որոշ բարերարների աջակցությամբ նախատեսվում է իրագործել մի նախաձեռնություն, որ արցախցիներին հնարավորություն կտա համայնքում հիմնել եւ ունենալ իրենց սեփական գործը:

Էդգար Պետրոսյանի խոսքով՝ նախաձեռնությունը մոտ օրերս, հնարավոր է, արդեն իրագործվի:

ArmLur.am-ի հետ զրույցում Պետրոսյանը նաեւ նշեց, որ 2020 թ. պատերազմից հետո Արցախի կորսված բնակավայրերից 427 արցախցի /90 ընտանիք/ հաստատվել է Վարդենիսում եւ առ այսօր շարունակում են բնակվել այնտեղ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինչական կոմիտեի Վայոց ձորի մարզային ֆինչական վարչության ֆինիչների կողմից ՀՀ ՆԳՆ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժնի ծառայողների հետ համագործակցաբար բացահայտվել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող հանցավոր խումբ: Այդ մասին հայտնում են ՀՀ ՔԿ-ից:

«2024թ. հունվարի 18-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ ԹԱՇԴՎ-ում օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ չորս անձինք խմբի կազմում, Սյունիքի մարզի Գորիս քաղաքից ձեռք բերելով տարբեր տեսակի թմրամիջոցներ, Երեւան քաղաքում իրացնելու նպատակով զբաղվում են թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ:

Նույն օրը ստացված օպերատիվ տեղեկություններն իրացնելիս վերը նշված անձինք, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, ձերբակալվել եւ տեղափոխվել են ոստիկանության Եղեգնաձորի բաժին:

Անձնական խուզարկությամբ նրանցից մեկի մոտ հայտնաբերվել է ներարկիչ՝ լցված 0,3 միլիգրամ կարմրագույն լուծույթով, երկրորդի մոտից՝ 3.44 գրամ ընդհանուր քաշով ապակյա գլանակ՝ մոխրացած պատերով, երրորդի մոտից՝ գաղտնի փականով, 9սմ երկարությամբ եւ 1սմ լայնությամբ շեղբով ծալովի դանակ, իսկ չորրորդ անձի մոտից՝ փայլաթիթեղի մեջ լցված, կպչուն ժապավենով փաթեթավորված շագանակագույն, սուր հոտով «Հերոին» տեսակի թմրամիջոցի նմանվող զանգված:

Նախնական տվյալներով՝ վերջինս, որը հանդիսանում է Երեւան քաղաքի 35-ամյա բնակիչ, իր վերոհիշյալ երեք ընկերների հետ նախնական համաձայնության գալով իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ձեռք բերելու եւ Երեւան տեղափոխելու հարցի շուրջ, նրանց հետ միասին 2024թ. հունվարի 17-ին ավտոմեքենայով Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքից ուղեւորվել են Սյունիքի մարզ, որտեղից ապօրինի ձեռք են բերել պոլիէթիլենային թաղանթով եւ փայլաթիթեղով փաթեթավորված ընդհանուր 799.39 գրամ քաշով, նախնական տվյալներով, հերոին տեսակի թմրամիջոց, որը հայտնաբերվել է Երեւանի բնակչի անձնական խուզարկության ժամանակ:

Բացի այդ, վերջինս, լինելով ձերբակալվածի կարգավիճակում, 2024թ. հունվարի 18-ին՝ ժամը 02:00-ին, ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնի վարչական շենքի 2-րդ հարկում գտնվող զուգարանի պատուհանից դիմել է փախուստի, սակայն ժամը 02:04-ին Եղեգնաձոր քաղաքում հայտնաբերվել է եւ տեղափոխվել Ոստիկանության բաժին:

Այս դեպքերի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ, նախաքննության ընթացքում կատարվել են անհրաժեշտ քննչական եւ ապացուցողական գործողություններ: Մասնավորապես, կատարվել է ավտոմեքենայի զննություն, որի արդյունքում հայտնաբերվել է ընդհանուր 24.80 եւ 9.95 գրամ քաշով թղթե փաթեթներ՝ նախնական տվյալներով կանեփի բույսից պատրաստված թմրամիջոցի նմանվող զանգվածով: Նշանակվել են փորձաքննություններ հայտնաբերված զանգվածների բաղադրությունը պարզելու նպատակով:

Քննությամբ պարզվել է նաեւ, որ Երեւան քաղաքի վերոհիշյալ բնակիչը, տեղյակ լինելով տրանսպորտային միջոց վարելու իրավունքից 1 տարի ժամանակով զրկված լինելու մասին, 2024թ. հունվարի 16-ին՝ ժամը 21:43-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում վարել է օրենքով սահմանված կարգով տեխնիկական զննություն չանցած «Վազ 21154» մակնիշի տրանսպորտային միջոցը:

Հիշյալ անձանցից երեքին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի ապօրինի շրջանառությունը), իսկ Երեւան քաղաքի բնակչին՝ 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 506-րդ հոդվածի 1-ին մասով (արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմարկում պատիժ կրող անձի փախուստը կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելը) եւ 344-րդ հոդվածի 1-ին մասով (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելը կամ այդ անձի կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից հարբած (ոչ սթափ) վիճակում տրանսպորտային միջոց վարելը կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելը կամ խուսափելը):

Դատարանի որոշմամբ՝ երեք անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը, իսկ մեկի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրը, հանցավոր շղթայում այլ անձանց ներգրավվածությունը պարզելու ուղղությամբ»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԱՀԱՋԱՆԳ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՋՐԱՀԵՂՁ Է ԵՂԵԼ

Հունվարի 23-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 11:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել Ծովակ գյուղի գյուղապետից, որը հայտնել է, որ Ծովակ բնակավայրի մոտակայքում՝ Սեւանա լճում, խաղախացին ջրահեղձ է եղել, դին դուրս բերելու համար անհրաժեշտ է ջրափրկարարների օգնությունը:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր են ժամանել թիվ 34 հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ:

Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզի գումարտակի պարեկները՝ գումարտակի հրամանատար Ալբերտ Մարտիրոսյանի գլխավորությամբ:

Դեպքի վայր են ժամանել ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ Արթուր Զոհրաբյանը եւ ոստիկանության Վարդենիսի բաժնի պետ Արմենակ Մուրադյանը:

Քաղաքացու որոնողական աշխատանքներին մասնակցել են փրկարարները, ջրային պարեկներն ու քաղաքացիները:

Մի քանի ժամ տեւած որոնողական աշխատանքների արդյունքում քաղաքացիները ափից 300-400 մետր հեռավորությունից ու մոտ 5 մետր խորությունից դուրս են բերել դին, ապա մոտեցրել ափին, այնուհետեւ փրկարարները պատգարակով դին մոտեցրել են դիատարին:

Ահազանգով դեպքի վայր են ժամանել Հայաստանի քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժնի խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Տեղում ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ մահացածը Ծովակ գյուղի բնակիչ 36-ամյա Անդրանիկ Հովհաննիսյանն է:

Դեպքի փաստով Վարդենիսի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎՆԱՍԸ՝ 877 ՄԼՆ ԴՐԱՄ

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրվել են Բուզանդ 1/3 հասցեում գտնվող՝ Երեւան համայնքին պատկանող շենքի վերաբերյալ փաստաթղթերը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2010-2023 թվականն ընկած ժամանակահատվածում Երեւանի քաղաքապետարանի համապատասխան պաշտոնատար անձինք նույն համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Բուզանդի 1/3 հասցեում գտնվող երկրորդ մասնաշենքից մի շարք տարածքներ՝ ակնհայտ ցածր գներով, վարձակալության են հանձնել տարբեր ֆիզիկական եւ իրավաբանական անձանց:

2010-2020 թվականներին Երեւան քաղաքի ավագանին իր ծրագրում գույքի վարձակալության վարձավճարների չափերը սահմանելիս նշել է, որ վարձակալության տրամադրվող գույքի (տարածքի) ամսական վարձավճարի չափը որոշվում է Կառավարության՝ 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշմամբ:

Երեւան քաղաքի ավագանին, 2021 թվականից սկսած (վերոնշյալ որոշումը ուժը կորցրած ճանաչվելուց հետո), իր սեփականությունը համարվող գույքն օգտագործման տրամադրելու եւ օտարման ծրագրում սահմանել է, որ վարձակալության տրամադրվող գույքի (տարածքի) ամսական վարձակալական վճարների նվազագույն մեծությունը որոշվում է շուկայական գնահատմամբ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության՝2020 թվականի հունիսի 4-ի 914-Ն որոշման:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ քաղաքապետարանի պաշտոնատար անձինք, յուրաքանչյուր տարի վերոնշյալ ծրագրի դրույթներին համապատասխան գործելու փոխարեն, համայնքին պատկանող անշարժ գույքը կամայականորեն եւ ակնհայտ ցածր գներով վարձակալության են տրամադրել մի շարք ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, մինչդեռ պետք է սահմանված բանաձեւերով հաշվարկվեր վարձավճարի նվազագույն գինը, նշված գնով տարածքի վերաբերյալ աճուրդ կամ մրցույթ հայտարարվեր, ձեւավորվեր շուկայական արժեքը, օրենսդրության փոփոխմամբ պայմանավորված՝ տարածքներն անկախ գնահատողի կողմից ենթարկվեր շուկայական գնահատման:

Նախնական տվյալներով՝ համայնքին պատճառվել է ըստ շուկայական միջին գնի՝շուրջ 877 մլն դրամի վնաս (պատճառված վնասի չափերը հաշվարկված են Դատախազության դիմումի հիման վրա՝ Երեւանի քաղաքապետարանից ստացված՝ 28 վարձակալներից ընտրանքային տարբերակով ուսումնասիրված 7 վարձակալների վարձավճարների չափերի հիման վրա):

Նկատի ունենալով, որ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են առերեւույթ հանցանքի դեպքեր՝ դատախազը հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե:

2024 թվականի հունվարի 20-ին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելով՝ պետությանը (համայնքին) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը):

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունվարի 19-ից 22-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 116 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱՆՃԱՇԱԿ ԴՈՒՅԼԵՐ՝ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

Դիլիջան քաղաքի հասարակական տրանսպորտի կանգառներում տեղադրված փայտե կլոր կաղապարների մեջ որպես աղբաման դրված են մետաղյա դույլեր: Դիլիջանի բնակիչներից ոմանք դժգոհում են աղբաման- դույլերի չափերի մեծությունից ու անճաշակությունից, ոմանք մտահոգություն են հայտնում, որ դույլերը կարող են գողանալ, ուրիշներն էլ համայնքապետարանին հիշեցնում են, որ կահավորված կանգառներից շինարարական աղբը պետք է հեռացնել, որ տուրիստական քաղաքի փողոցներում թափառող հարյուրավոր անտեր շները բաց դույլեր-աղբամանների պարունակությունը շաղ են տալու փողոցներում:

ՄԱՔՐԵԼՈՒ ՓՈՂ ՉԿԱ՞

2023թ. դեկտեմբերի 27-ին Դիլիջանի ավագանին հաստատել է Դիլիջան համայնքի 2024թ. բյուջեն եկամուտների գծով եւ ծախսերի գծով՝ 1471748.15 հազար ՀՀ դրամ: Ավելի քան 1 միլիարդ 471 միլիոն դրամ բյուջե ունեցող համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանը շուրջ 3 տարի ֆինանսներ չի գտնում քաղաքի կենտրոնում գտնվող հայտնի «Միմինո» արձանախմբի հարեւանությամբ հոսող Աղստեւի հունը մաքրելու համար: Զբոսաշրջիկները զարմանքով են նայում գետի հունում աճած ծառերին ու մեծ բույսերին:

ԿՔՆՆՎԻ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ԺՊ Արա Խլոյանի 2021 թ. հունիսի 25-ի հրամանով աշխատանքից ազատված, ազգային պարկի «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի պետ Արտակ Հարությունյանը այդ հրամանը վիճարկել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում եւ այդ դատարանի վճռով վերականգնվել պաշտոնում: Հետո Ա. Հարությունյանը կրկին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան է դիմել, այս անգամ՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի նոր ԺՊ Ռոբերտ Ալիխանյանի՝ 2023թ. մարտի 24-ի թիվ 67-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջով: Այդ հրամանով Ա. Հարությունյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: 2023թ. մայիսի 18-ին դատարան է հանձնվել հայցադիմումի պատասխան: 2023թ. հուլիսի 31-ին դատավոր Նարինե Անանյանը վճռել է բավարարել Ա. Հարությունյանի հայցը, անվավեր ճանաչել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ԺՊ Ռոբերտ Ալիխանյանի՝ 2023թ. մարտի 24-ի թիվ 67-Ա հրամանը, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից հօգուտ Ա. Հարությունյանի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար: «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ը դատարանի այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել, որն ընդունվել է դատարանի վարույթ: Վերաքննիչ բողոքի քննությունը նշանակված է փետրվարի 15-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀՈՒՆՎԱՐԻ 24

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ

Կրթության միջազգային օրվան ընդառաջ Հայաստանի ազգային գրադարանում հանդիսությանը ներկայացվեց «Կրթության կառավարում» խորագրով մասնագիտական գրքերի շարքը:

Ներկայացված գրքերի հեղինակներն են տնտեսագիտության դոկտոր, ՀՊՏՀ պրոֆեսոր Արմեն Ճուղուրյանը, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, մանկավարժության դոցենտ, ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դեկան Ատոմ Մխիթարյանը, տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ Տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի դոցենտ Նոննա Խաչատրյանը եւ բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դոցենտ Աստղիկ Ավետիսյանը:

Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի պաշտոնակատար Նաննա Սկաուն, ողջունելով ներկաներին, ընդգծեց, որ չնայած Կրթության միջազգային օրը հունվարի 24-ն է, սակայն իր համար ամեն օրը կրթության օր է:

«Կարծում եմ՝ «Կրթության կառավարում» գրքերի շարքի սկիզբը դնելը հիանալի որոշում էր: Ժամանակները փոխվում են, եւ շատերն այսօր մտածում են, որ կրթությունը եւ, առհասարակ, բովանդակությունը մենք ստանում ենք օնլայն հարթակների միջոցով: Մենք տեսնում ենք, թե ինչպես են կրթությունն ու գրադարանները վերափոխվում, բայց կարծում եմ՝ չկա ավելի լավ բան, քան նստել տանը, կարդալ գիրքը եւ նշումներ անել: Շատ գնահատում ենք, որ այսօր ունենք տպագրված գրքեր, որը կրթության եւ նորը սովորելու հնարավորություն կընձեռի բոլորին»,-ասաց Սկաուն:

Գրքերի համահեղինակ, տնտեսագիտության դոկտոր, ՀՊՏՀ պրոֆեսոր Արմեն Ճուղուրյանն էլ ընդգծեց, որ այսօր մենք կարիք ունենք կրթության կառավարիչների պատրաստման, հայալեզու գրականություն գրեթե այդ ոլորտում չկա:

«Այդ իսկ պատճառով հեղինակային խմբով որոշեցինք կրթության կառավարման վերաբերյալ դասագրքեր հրատարակել: Ֆինանսներ, կրթության որակ, կրթության կառավարման օրենսդրական կարգավորումներ եւ կրթության արդյունավետ կառավարում հիմնասյուներով փորձեցինք կառուցել մի հայեցակարգ, որը, մի կողմից, կրթությունը կներկայացնի որպես գործարարություն, մյուս կողմից՝ հանրային բարիք՝ կառավարիչների համար»,-ասաց նա:

Գրքերի համահեղինակ Ատոմ Մխիթարյանը նշեց, որ գրքերը նախատեսված են բուհերի մագիստրոսական կրթական ծրագրերի ուսանողների, ինչպես նաեւ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, կրթության եւ գիտության վարչարարությամբ զբաղվող մասնագետների, կրթության բարեփոխումների գործընթացով հետաքրքրվածների համար:

Խոսելով ներկայացված գրքերի մասին՝ հեղինակները նշեցին, որ «Մասնագիտական կրթության կառավարման հիմունքներ» գիրքն անդրադառնում է կրթության կառավարման անհրաժեշտությանն ու բնույթին, կրթական ծառայությունների էկոհամակարգին, համալսարանական ինքնակառավարմանը, ակադեմիական ազատություններին, ներկայացնում է դասընթացի կառավարման գործընթացը, ֆորմալ եւ ոչ ֆորմալ կրթության կառավարման առանձնահատկությունները:

«Կրթության կառավարման օրենսդրական կարգավորումներ» գիրքն, ըստ գլուխների, մանրամասն ներկայացնում է կրթության, Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության, Բարձրագույն եւ հետբուհական կրթության մասին օրենքները, ինչպես նաեւ անդրադառնում է Հայաստանում գիտական աստիճանաշնորհման համակարգին ու բարձրագույն կրթության ենթաօրենսդրական կարգավորումներին:

Ըստ համահեղինակների՝ «Կրթության որակի ապահովումը բուհերում» գիրքը ներկայացնում է կրթության որակի բնորոշումը, անդրադառնում է կրթության որակի ապահովման մշակույթին, հավատարմագրման գործընթացներին, վերջնարդյունքների հենքով գնահատման համակարգին, ինչպես նաեւ հետբուհական կրթության որակի ապահովման Ջալցբուրգյան սկզբունքներին եւ գիտական ղեկավարների ինստիտուտին:

«Ֆինանսական կառավարումը բուհերում» ուսումնական ձեռնարկն անդրադառնում է բուհական համակարգում ֆինանսական ռեսուրսների ձեւավորմանը, համալսարանների ֆինանսների կառավարման առանձնահատկություններին, ինչպես նաեւ ֆինանսական վերահսկողության խնդիրներին:

Գրքերը երաշխավորված են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական խորհրդի եւ Հյուսիսային համալսարանի գիտական խորհրդի կողմից:

Հունվարի 24-ը ՄԱԿ-ի կողմից հռչակվել է Կրթության միջազգային օր:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է Հայաստանում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Գալագերին եւ Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Ադդէ Հովասափյանին:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը: Նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է հյուրերին եւ նշել, որ անցած տարիների հաջողված համագործակցությունը լավագույն հիմքն է՝այն շարունակելու նաեւ այս եւ հետագա տարիներին: Նախարարը հատկապես կարեւորել է ԿԳՄՍ նախարարության արդյունավետ համագործակցությունը Բրիտանական խորհրդի հետ՝ որպես հաջողված օրինակներ նշելով անգլերենի ուսուցիչների վերապատրաստման եւ ուսուցման որակի ապահովմանն ուղղված աջակցությունը, դպրոցներում անգլերենի ակումբների ստեղծման ծրագիրը. «Առանձնահատուկ կարեւոր են Բրիտանական խորհրդի դերը եւ աջակցությունն անգլերենի ուսուցման մեթոդաբանության մշակման եւ ուսուցիչների վերապատրաստման հարցերում: Կարող ենք արձանագրել, որ այս աջակցությամբ էականորեն բարելավվել են ուսուցիչների դասավանդման հմտությունները»:

Նշվել է, որ ծրագրի շրջանակում նախատեսված են այլ միջոցառումներ եւս, որոնք կիրականացվեն ընթացիկ տարում:

Հանդիպման ընթացքում կողմերը կարեւորել են գիտակրթական համատեղ ծրագրերի իրականացումը, որը կարող է նպաստել գիտության եւ կրթության ոլորտներում համագործակցության նոր հնարավորությունների ստեղծմանը:

Անդրադարձ է եղել ՀՀ-ում ընթացող կրթական եւ մշակութային բարեփոխումներին՝ վերահաստատելով պատրաստակամությունը ոլորտային ռազմավարությունների իրականացման հարցում:

Նախարար Ժաննա Անդրեասյանը հատկապես ընդգծել է «Մ. Մաշտոցի անվան Մատենադարան» հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի եւ Բրիտանական գրադարանի միջեւ նախատեսվող համագործակցության կարեւորությունը՝ որպես հաջողված փորձ նախանշելով Հայաստանի պատմության թանգարանի եւ Բրիտանական թանգարանի համագործակցությունը:

Կողմերն անդրադարձել են «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության հետ կապերի հետագա ընդլայնմանը: Մասնավորապես՝ քննարկվել է Ակադեմիական քաղաքի կրթական կլաստերի կայացման հարցում Լոնդոնի համալսարանական քոլեջի (UCL) հետ համագործակցային կապերի հաստատման հարցը: Այս համատեքստում Ժաննա Անդրեասյանը կարեւորել է «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի եւ Լոնդոնի արվեստների համալսարանի միջեւ համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը, որն ուղղված է Ակադեմիական քաղաքի Արվեստների կլաստերի ձեւավորման համար առաջարկությունների եւ գործիքների տրամադրման, կրթական ծրագրերի մշակման, որակի ստուգման եւ ինստիտուցիոնալ կառավարման բնագավառներում աջակցությանը:

Հանդիպման ընթացքում նախարարն ու դեսպանը քննարկել են նաեւ համագործակցության ընդլայնման հնարավորություններին առնչվող մի շարք այլ հարցեր:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 39 պատահար. 4 մարդ զոհվել է, 65-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝ ԲԼՈԿՉԵՅՆԻ ՈԼՈՐՏՈՒՄ

«Բահամուտ» հիմնադրամի տեխնիկական խորհրդատու Արամ Ջիվանյանը եւ թիմակիցներ Կարեն Թերջանյանն ու Վլադիմիր Իգիթխանյանը մասնակցել են Մակաոյում տեղի ունեցած Big Data and Privacy Computing (BDPC 2024) խորագրով 2-րդ միջազգային կոնֆերանսին, որի ժամանակ ներկայացրել են Բահամուտ բլոկչեյնի նախընտրելի Proof of Stake and Activity (PoSA) կոնսենսուս ալգորիթմն ու դրա ընձեռած լայն հնարավորությունները: Նրանց ելույթն ընտրվել է միջոցառման լավագույն պրեզենտացիա:

PoSA-ն նորարարական կոնսենսուս ալգորիթմ է, որը պարգեւատրում է վալիդատորներին՝ հիմնվելով նրանց կողմից ցանցում տեղակայված սմարթ պայմանագրերի օգտագործման վրա: Պարզ ասած՝ որքան շատ կիրառվեն պայմանագրերը, այնքան ավելի մեծ կլինի վալիդատորի՝ պարգեւավճար ստանալու հնարավորությունը: Սա խթան է սմարթ պայմանագիր մշակողների համար՝ ստեղծելու բարձրորակ եւ շատ կիրառվող պայմանագրեր:

Եթե Bitcoin-ի նախընտրելի ալգորիթմ Proof of Work (PoW)-ի դեպքում կատարվում են բարդ մաթեմատիկական հաշվարկներ, իսկ Ethereum-ի կոնսենսուս մեխանիզմ Proof of Stake (PoS)-ի դեպքում մրցակցությունն ապահովում է ցանցի անդամների կողմից սառեցված գումարի չափը, ապա PoSA-ի պարագայում սառեցված գումարի հետ մեկտեղ հաշվարկվում է նաեւ ցանցում ցուցաբերված ակտիվությունը:

Այս մոտեցմամբ «Ֆասթեքս»-ը՝ որպես գիտական առաջընթացի առաջատար, ոչ միայն բարձրացնում է բլոկչեյնի տարածվածությունը, այլեւ մեծապես աջակցում եւ նպաստում է գիտական եւ տեխնոլոգիական նորարարություններին: Այսկերպ ընկերությունը նոր չափանիշներ է սահմանում բլոկչեյնի ոլորտում՝ հավատարիմ մնալով մշտական առաջընթացին եւ կատարելությանը:

Գրախոսվող աշխատանք ունենալը եւ այն գիտատեխնոլոգիական կոնֆերանսում ներկայացնելը մեծագույն ձեռքբերում է: Դա փաստում է, որ տվյալ մոտեցումը նոր է, հիմնված է բազմաթիվ ուսումնասիրությունների վրա եւ արժանացել է ոլորտի մասնագետների բարձր գնահատանքին:

BDPC 2024-ի ժամանակ փորձագետները պատմել են նաեւ իրենց հաջողությունների մասին՝ հատուկ անդրադարձ կատարելով բլոկչեյն տեխնոլոգիայի առաջխաղացումներին, ընդգծելով բլոկչեյն նորարարության ոլորտում «Բահամուտ»-ի ունեցած էական ներդրումը: «Ֆասթեքս»-ը մտադիր է շարունակել իր նպաստավոր գործունեությունը PoSA կոնսենսուս ալգորիթմով՝ խթանելով գիտության զարգացմանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԴՊՐՈՑ

Եվրոպայի խորհրդի քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցը (ՔԴԵԴ) ընդունում է հայտեր 2024 ուսումնական տարվա ընթացքում Հայաստանում կազմակերպվելիք միջոցառումներին (սեմինարներ, քննարկումներ, հանդիպումներ եւ այլն) մասնակցելու համար:

● ՔԴԵԴ-ի միջոցառումները մեծավ մասամբ արտագնա են,
● միջավայրն ինտելեկտուալ է,
● քննարկումներն ամենաակտուալ քաղաքական, տնտեսական, ռեգիոնալ, աշխարհաքաղաքական, քաղաքակրթական եւ այլ թեմաների վերաբերյալ են,
● ՔԴԵԴ-ում սովորում են տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներ՝ քաղաքագետներ, տնտեսագետներ, իրավաբաններ, վերլուծաբաններ, լրագրողներ եւ այլն,
● ՔԴԵԴ-ում դասավանդում են հանրապետության լավագույն էքսպերտները, օտարերկրյա փորձագետներ, դեսպաններ,
● ստեղծվում են ՔԴԵԴ-ական ցանցային կապեր մասնակիցների, շրջանավարտների եւ դասախոսների միջեւ:

Եվս մեկ միջոցառում նախատեսվում է Ստրասբուրգում (Ֆրանսիա), որի մասնակիցների ընտրության պայմանների մասին կհայտարարվի լրացուցիչ:

Ստրասբուրգյան սեմինարներին դասախոսություններով հանդես են գալիս պետությունների, միջազգային կազմակերպությունների ղեկավարներ, եվրոպական երկրների կառավարությունների ղեկավարներ եւ անդամներ, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ, եվրոպական առաջատար համալսարանների դասախոսներ եւ այլք:

ՔԴԵԴ-ը Քաղաքական դասընթացների դպրոցների եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամ է, քաղաքականապես չեզոք, չի հարում քաղաքական որեւէ հոսանքի, կուսակցության, խմբի կամ անհատի:

ՔԴԵԴ-ը Հայաստանում ստեղծված առաջին քաղաքական դպրոցն է եւ գործում է շուրջ երկու տասնամյակ:

ՔԴԵԴ-ի նպատակն է օժանդակել երիտասարդության քաղաքագիտական իմացությունների ընդլայնմանը եւ ժողովրդավարական մշակույթի խորացմանը՝ եվրոպական ստանդարտներին համապատասխան:

ՔԴԵԴ-ի շրջանավարտ են խորհրդարանի տարբեր գումարումների պատգամավորներ, նախարարներ, դատավորներ, փոխնախարարներ, ավագանիների անդամներ, նախագահի, կառավարության, ԱԺ աշխատակազմերում, նախարարություններում եւ նրանց ստորաբաժանումներում, կուսակցություններում, հասարակական կազմակերպություններում, դատահիրավական համակարգում, բիզնեսում պատասխանատու դիրքեր զբաղեցնողներ, միջազգային կազմակերպությունների աշխատակիցներ, ինչպես նաեւ լրագրողներ, վերլուծաբաններ, քաղաքագիտության ոլորտի մասնագետներ եւ այլն:

● Քննարկումները բազմաթեմատիկ են ու բազմաբովանդակ,
● մթնոլորտը բարյացակամ է ու առողջ,
● յուրաքանչյուրն ազատ է իր տեսակետների մեջ, անկաշկանդ մասնակցում է քննարկումներին,
● հայաստանյան դասընթացը բարեհաջող ավարտածներին կտրվի Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի ստորագրությամբ ավարտական վկայական,
● հայաստանյան դասընթացը բարեհաջող ավարտածները հնարավորություն ունեն դիմել ստրասբուրգյան սեմինարին մասնակցելու համար:

ՔԴԵԴ կարող են դիմել խորհրդարանի, ավագանիների անդամները, նախագահի, կառավարության եւ ԱԺ աշխատակազմերում, նախարարություններում եւ նրանց ստորաբաժանումներում, հասարակական կազմակերպություններում, դատահիրավական համակարգում, տարածքային եւ տեղական կառավարման մարմիններում, բիզնեսում եւ տնտեսվարող սուբյեկտներում, ԱԺ-ում ներկայացված կուսակցություններում պատասխանատու դիրքեր զբաղեցնողները, քաղծառայողները, միջազգային կազմակերպությունների աշխատակիցները, կրթության ոլորտի ներկայացուցիչները, ինչպես նաեւ լրագրողները, վերլուծաբանները, քաղաքագիտության ոլորտի մասնագետները:

Հայտատուն պետք է՝

1. լինի 23-ից մինչեւ 40 տարեկան,
2. ունենա երկու տարուց ոչ պակաս (2022-2023թթ. ներառյալ) մասնագիտական աշխատանքային ստաժ: Ուսումնառության, զինվորական ծառայության, կամավորական աշխատանքի ժամանակահատվածը չի համարվելու մասնագիտական ստաժ,
3. աշխատելիս լինի,
4. լինի Եվրոպայի խորհրդի որեւէ անդամ-պետության լիիրավ քաղաքացի:

Անգլերենի կամ ֆրանսերենի իմացությունը նախընտրելի է:

Քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցի կազմակերպելիք միջոցառումներին մասնակցել ցանկացողները պետք է պարտադիր ներկայացնեն՝

1. դիմում-հարցաթերթիկ (հատուկ ձեւ), որի բոլոր կետերը ենթակա են պարտադիր լրացման,
2. մեկ լուսանկար (փակցնել դիմում-հարցաթերթիկին),
3. անձը հաստատող փաստաթուղթ (անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն),
4. ինքնակենսագրություն (CV):

Ըստ անհատական դեպքի՝ կարող են պահանջվել այլ փաստաթղթեր եւս:

Վերոնշյալ պայմաններին չհամապատասխանող անձանց համար, ովքեր հետաքրքրված են ՔԴԵԴ ծրագրով, կազմակերպվի առանձին ընդունելություն՝ այլ պայմաններով: Նախագրանցվելու համար CV-ն ուղարկել ysps_ysps@yahoo.com էլեկտրոնային հասցեին՝ «Թեմա» դաշտում կատարելով «Նախագրանցում» նշումը:

Նախնական մրցույթի փուլը (փաստաթղթերի ուսումնասիրություն) հաղթահարած թեկնածուներին կտրվի քննություններին մասնակցելու հնարավորություն:

Քննական գործընթացը բարեհաջող հաղթահարածները ՔԴԵԴ-ի մասնակցի կարգավիճակ ստանալու համար ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ներկայացնում են նաեւ՝

1. հավաստագիր (հատուկ ձեւ),
2. տեղեկանք աշխատավայրից (հատուկ ձեւ)՝ պարտադիր ստորագրված ու կնքված,
3. տեղեկանք հաշվառման վայրի վերաբերյալ, Եթե ընդունելության փուլում որպես անձը հաստատող փաստաթուղթ ներկայացրել են նույնականացման քարտի կամ կենսաչափական անձնագրի պատճենը,
4. երաշխավորագիր գործուղող կազմակերպությունից:

Հայտատուին երաշխավորող անձը/մարմինը պատասխանատվություն է կրում իր կողմից ՔԴԵԴ գործուղվող հայտատուի համար:

ՔԴԵԴ-ի հայաստանյան միջոցառումները կազմակերպվում են ինչպես Երեւանում, այնպես էլ մայրաքաղաքից դուրս: Ուսումնառության եւ կեցության ծախսերը հոգում է ՔԴԵԴ-ը: Հայաստանյան ուսումնական ցիկլի ողջ գործընթացը մասնակցի կողմից համաֆինանսավորվում է 49 800 ՀՀ դրամի չափով:

Միջոցառումների հայաստանյան ցիկլը բարեհաջող ավարտողները կարող են դիմել ստրասբուրգյան սեմինարին մասնակցելու համար: Դիմումները քննության կառնվեն՝ ըստ Եվրոպայի խորհրդի սահմանած պայմանների եւ քվոտաների: Ընտրված հայտատուները կայցելեն Եվրոպայի խորհուրդ, Եվրոպական պառլամենտ, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, կստանան այնտեղ խոսք ասելու հնարավորություն:

Որեւէ փուլում իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն ներկայացրածները կզրկվեն ՔԴԵԴ-ի աշխատանքներին մասնակցելու հնարավորությունից դրանք ի հայտ գալուն պես:

Փաստաթղթային փաթեթը ներկայացնել անձամբ՝ անձնագրի կամ նույնականացման քարտի առկայությամբ: Թերի ներկայացված դիմումները ենթակա չեն քննարկման: ՔԴԵԴ հանձնված փաստաթղթերը չեն պատճենահանվում եւ չեն վերադարձվում: Էլեկտրոնային տարբերակով ուղարկված փաստաթղթերը չեն կցվում գործերին: Ներկայացնել միայն բնօրինակները:

Դիմումներն ընդունվում են հունվարի 26-ին եւ փետրվարի 1-ին եւ 2-ին՝ ժամը 13:00-ից 16:30-ը: Այդ օրերին հանրապետությունից բացակայողները կարող են փաստաթղթային փաթեթը հանձնել ավելի վաղ՝ նախապես պայմանավորվելով: Հասցե՝ Խորենացու պող. 33, «Տաշիր» կենտրոնի 6-րդ՝ գրասենյակային հարկ, 31-րդ սենյակ:

Հեռախոս՝ 094 293903 (հարցերի դեպքում զանգահարել աշխատանքային օրերին՝ ժամը 14.00-16.00-ն)

Կայք՝ www.ysps.am:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող թանգարանները 2023-ին հյուրընկալել են շուրջ 1.2 մլն այցելուի, իսկ պետական բյուջեից թանգարանների եւ գրադարանների ոլորտին հատկացվել է շուրջ 2.7 մլրդ դրամ:

Այս մասին լրագրողների հետ հանդիպմանն ասել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը:

«2023-ին մշակվել եւ շրջանառվում է Թանգարանների զարգացման, կառավարման հիմնադրամը, որը պետք է աջակցող մարմին լինի թանգարանների համար եւ իր վրա վերցնի թանգարանների բեռը՝ մարքեթինգի, հանրահիչակման եւ այլ գործառույթներ: Այս հիմնադրամը թանգարաններին հնարավորություն կտա ավելի շատ տեսանելիություն ունենալ, ավելի շատ այցելուներ հյուրընկալել եւ բարձրորակ միջոցառումներ կազմակերպել»,-նշել է փոխնախարարը:

Նրա խոսքով՝ կառավարման համակարգում արդիականացում իրականացնելով՝ գնում են օպտիմալացման:

«Նիկողայոս Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարանը միացրել ենք Հրազդանի երկրագիտական թանգարանին: Այս կառույցները դարձել են Հայաստանի պատմության թանգարանի մասնաճյուղ: Մենք այդ ճանապարհով ենք գնում, քանի որ նման պարագայում մարզային թանգարանները կարողանում են կիրառել Հայաստանի պատմության թանգարանի փորձը եւ հնարավորությունները»,- հավաստիացրել է նա:

Քոչարյանը 2023-ի կարեւոր նախաձեռնություն է համարում միասնական էլեկտրոնային տոմսային համակարգը: Ծրագիրն արդեն պատրաստ է, եւ հաջորդ տարի տեխնիկական հագեցվածությունը կապահովվի:

Ալֆրեդ Քոչարյանն ընդգծել է, որ սահմանվել են նախարարության ենթակայությամբ գործող թանգարանների, արգելոց-թանգարանների մշտական ցուցադրության այցելության եւ բացատրության (էքսկուրսիա) տոմսերի նոր սակագներն ու արտոնությունները, որոնց համաձայն՝ մինչեւ 12 տարեկան երեխաների եւ Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի տարածքներում մարտական գործողությունների ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամների մուտքն անվճար է: Փոփոխվել ու վերանայվել է նաեւ դպրոցական բաժանորդային համակարգը:

«Կապիտալ վերազինման ուղղությամբ եւս լուրջ աշխատանք է իրականացվել. վերականգնվել է 2009 թվականից դադարեցված ՀՀ թանգարանային ֆոնդի համալրման նպատակով բյուջետային միջոցների տրամադրումը: 2023 թվականին տրամադրվել էր 44 մլն 320 հազար դրամ: Այդ գումարի շրջանակում պետական միջոցներով գնվել են թանգարանների ֆոնդերին անհրաժեշտ արժեքներ, իսկ մշակութային արժեքների փորձագիտական կենտրոնը պետական աջակցությամբ համալրվել է ֆիզիկաքիմիական լաբորատոր սարքավորումներով»,- նշել է նախարարի տեղակալը:

Հայաստանի ազգային պատկերասրահի ցուցասրահների կապիտալ նորոգում է ընթանում: Նախարարությունը որոշել է այն ամբողջությամբ վերակառուցել, նորոգել: Գործընթացը կշարունակվի նաեւ հաջորդ տարի:

«Պատկերասրահից բացի, այլ թանգարանների գույքային կապիտալին ուղղվել են գումարներ: Հայաստանի ազգային գրադարանի ցանցային սերվերն ենք ձեռք բերել, գումար ենք հատկացրել, որով վերանորոգվելու են սանհանգույցները, Շարամբեյանի անվան թանգարանի սանհանգույցն է վերանորոգվելու, Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի շքամուտքն է նորոգվելու, վերանորոգվել են Մինաս Ավետիսյանի եւ Գեւորգ Գրիգորյանի (Զոտտոյի) թանգարանները, որոնք նաեւ վերաբացվել են, մեկնարկել են Հովհաննես Թումանյանի թանգարանի վերանորոգման աշխատանքները»,-ասել է Ալֆրեդ Քոչարյանը:

ԹԱՏՐՈՆ

«ՑԵՆԶՈՒՐԱՅԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼՆ ԱՆՄՏՈՒԹՅՈՒՆ Է»

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը ԱԺ-Կառավարություն հարցուպատասխանի ժամանակ անդրադարձավ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի՝ «Գոյ» թատրոնի հետ կապված խնդիրներին:

Նախարարն ասաց, որ «Գոյ» թատրոնում վերակազմակերպման գործընթաց է: Որպես ստեղծագործական միավոր՝ թատրոնի հետ որեւէ բան տեղի չի ունենում, նախարարությունը շարունակելու է ֆինանսավորել թատրոնի խաղացանկը:

«Մենք ունենք վերակազմակերպման պարզ գործընթաց, երբ «Գոյ» թատրոնն իր խաղացանկով, իր ստեղծագործական ազատությամբ եւ ֆինանսավորմամբ ընդամենը գործում է Սունդուկյան թատրոնի հովանու ներքո: Որեւէ բան տեղի չի ունենում «Գոյ» թատրոնի հետ՝ որպես ստեղծագործական միավոր: Մենք խոսում ենք երկու ՊՈԱԿ-ների միավորման գործընթացի մասին, որոնք գործում էին մեկ շենքում»,- ասաց նախարարը:

Ըստ Անդրեասյանի՝ «Գոյ»-ի կոմունալ ծախսերն անգամ Սունդուկյան թատրոնն է վճարել: Այսինքն՝ այդ իմաստով էլ ամբողջապես անկախ ու ինքնավար իրավիճակ չի եղել: Այժմ կլինի մեկ ՊՈԱԿ, որի ներքո գործելու է նաեւ «Գոյ» թատրոնը՝ որպես առանձին ստեղծագործական միավոր:

««Գոյ» թատրոնը ստանալու է հավելյալ հնարավորություններ, քանի որ Սունդուկյան թատրոնի բեմերն ու տարածքները շատ ավելին են: Կարծում եմ, որ դերասանական կազմն ու ռեժիսորները կարող են նաեւ նոր մտահղացումներ ունենալ՝ դրանք իրագործելու նաեւ այդ ենթակառուցվածքի պայմաններում: Կարծում եմ՝ սա պետք է բերի միայն ստեղծագործական ազատության, նախաձեռնողականության եւ նոր ծրագրերի: Եվ զարմանում եմ, որ, դրանց անցնելու փոխարեն, մենք հիմա զբաղված ենք ինչ-որ խոսակցություններով, որոնք, ըստ էության, կապ չունեն իրականացվող գործընթացի հետ»,- ասաց նախարարը:

Սիսակ Գաբրիելյանը հետաքրքրվեց՝ նախարարությունը շարունակելու է արդյոք ֆինանսավորել «Գոյ» թատրոնի խաղացանկը, եւ ստեղծագործական-բովանդակային առումով որեւէ կերպ այս փոփոխությունից թատրոնը չի տուժելու:

Նախարարը հաստատեց՝ ընդգծելով, որ ցենզուրայի մասին որեւէ բան խոսելն անմտություն է: Խաղացանկը թատրոնն է որոշում: Ահնհրաժեշտության դեպքում ԿԳՄՍՆ-ում եւս մեկ հանդիպում կարող է կայանալ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Ղազախստանում տեղի է ունեցել օլիմպիական չեմպիոն Օլգա Ռիպակովայի 9-րդ միջազգային մրցաշարը, որին մասնակցել է նաեւ Հայաստանի աթլետիկայի հավաքականի առաջատար եռացատկորդ Լեւոն Աղասյանը:

Կապանցի մարզիկը 2024-ի առաջին մրցաշարում ցատկել է 16.26մ եւ արժանացել արծաթե մեդալի: Մրցաշարին մասնակցել է 8 երկրի ավելի քան 70 մարզիկ:

Նշենք, որ 2015 թվականից կազմակերպվող ամենամյա մրցաշարն արտոնագրված է եւ ստացել է World Continental Bronze Tour կարգավիճակ, ինչպես նաեւ վարկանիշային է Օլիմպիական խաղերի համար:

ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ

Իտալիայի Սուպերգավաթի եզրափակչում Միլանի «Ինտերի» ֆուտբոլիստներից ամենաբարձր գնահատականները ստացել են Հայաստանի հավաքականի նախկին ավագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը եւ աշխարհի չեմպիոն՝ Արգենտինայի հավաքականի հարձակվող Լաուտարո Մարտինեսը: Չեմպիոն «Նապոլիի» դեմ եզրափակիչում երկու խաղացողների գործողություններն էլ գնահատվել են հավասար՝ 7 գնահատականով: Իտալիայի թիմը հաղթել էր 1:0 հաշվով, միլանյան թիմի հաղթական գոլը խփել է Լաուտարո Մարտինեսը 91-րդ րոպեին՝ ավելացված ժամանակում: Ինտերը» երրորդ տարին անընդմեջ նվաճեց Իտալիայի սուպերգավաթը:

ՕՏԱՐ ԴՐՈՇԻ ՆԵՐՔՈ

Արսեն Զուլֆալակյանը փոխել է սպորտային քաղաքացիությունը. այս մասին հայտնել է Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Արայիկ Բաղդադյանը: «Արսեն Զուլֆալակյանն արդեն 4 տարի է, ինչ Հայաստանի դրոշի ներքո հանդես չէր գալիս: Նա որոշում է կայացրել սպորտային քաղաքացիությունը փոխել, եւ հանդես է գալիս Արգենտինայի դրոշի ներքո»,- ասել է նա: Արսեն Զուլֆալակյանը Արգենտինայի դրոշի ներքո օրեր առաջ մասնակցել է Ֆրանսիայում կայացած Գրան Պրիին եւ դարձել է արծաթե մեդալակիր: Հայաստանի հավաքականի կազմում նա մասնակցել է երեք օլիմպիական խաղերի՝ «Պեկին-2008», «Լոնդոն-2012», «Ռիո-2016»:

ՀԱՄԱԼՐՈՒՄ Է ԿԱՋՄԸ

Երեւանի «Արարատ» ֆուտբոլային ակումբը համալրում է կազմը նոր ֆուտբոլիստով: Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը: «Արարատ»-ը պայմանագիր է ստորագրել 21-ամյա բրազիլացի դարպասապահ Տիագո Գոմես դոս Սանթոսի հետ:

194 սմ հասակ ունեցող ֆուտբոլիստը ծնվել է 2003 թվականի հունվարի 20-ին բրազիլական Սալվադոր քաղաքում: Նա «Արարատ» է տեղափոխվել տեղի «Բահիա» ակումբի երիտասարդական թիմից:

«Ես շատ ուրախ եւ մոտիվացված եմ այս մարզաշապիկը կրելու հնարավորությունից: Հուսով եմ, որ լավագույնս կօգնեմ թիմին եւ լավ արդյունքներ կգրանցեմ մրցաշրջանի ընթացքում»,-նշել է Տիագո Գոմեսը:

● *Հունվարի 28-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Բալերինա» մանկապատանեկան ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչ է անհրաժեշտ իմանալ Հայաստան մուտք գործելիս:

Հայրիկ Ղուկասյան (69 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ԵԱՏՄ մաքսային տարածք օդային տրանսպորտով առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման թույլատրվում է ներմուծել անձնական օգտագործման հետեւյալ ապրանքները (մեկ ֆիզիկական անձի հաշվարկով)՝

ուղեկցվող եւ չուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող ապրանքներ (բացառությամբ էթիլ սպիրտի, ալկոհոլային խմիչքների, գարեջրի), որոնց արժեքը չի գերազանցում 10.000 եվրոյին համարժեք գումարը, իսկ քաշը՝ 50 կգ-ը՝ ներառյալ

ծխախոտ եւ ծխախոտային արտադրանք հետեւյալ չափաքանակներով՝

200 սիգարետ

կամ 50 սիգար (սիգարիլլա),

կամ 250 գրամ ծխախոտ,

կամ նշված արտադրատեսակների տեսականին ոչ ավելի, քան 250 գրամ ընդհանուր քաշով

«Զվարթնոց» օդանավակայան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուղեկցվող եւ չուղեկցվող ուղեբեռում ներմուծվող ալկոհոլային խմիչքներ եւ գարեջուր՝ 3 լիտր: Անհրաժեշտ է հիշել՝ 3 լիտրից ավելի, բայց 5 լիտրից ոչ ավելի քանակությամբ ալկոհոլային խմիչքներ եւ գարեջուր ներմուծելիս 3 լիտր քանակական նորմի գերազանցման մասով ենթակա են վճարման 1 լիտրի դիմաց 10 եվրո միասնական դրույքաչափով գանձվող մաքսատուրքեր, հարկեր:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է թույլատրվում փոփոխել աշխատանքի էական պայմանները:

Մարինե Մարգարյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքի վայրի, աշխատանքի վարձատրության չափի եւ (կամ) այն որոշելու ձեւի, արտոնությունների, աշխատաժամանակի (աշխատանքի եւ հանգստի) ռեժիմի, տարակարգերի եւ պաշտոնների անվանումների, աշխատանքային պայմանագրի տեսակի եւ (կամ) գործատուի փոփոխման դեպքում թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները: Փոփոխելու դեպքում գործատուն պետք է գրավոր ծանուցի մինչեւ 1 տարի աշխատողին ոչ ուշ, քան 14 օր առաջ, 1-5 տարի աշխատողին՝ 35 օր առաջ, 5-10 տարի աշխատողին՝ 42 օր առաջ, 10-15 տարի աշխատողին՝60 օր առաջ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելիս մի կողմը գրավոր առաջարկում է մյուս կողմին լուծելու պայմանագիրը: Համաձայնության դեպքում մյուս կողմը 7 օրվա ընթացքում պետք է ծանուցի առաջարկ ներկայացրած կողմին, որից հետո կնքվում է գրավոր համաձայնագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Միլենան մեկն է այն աղջիկներից, որ շուտով կիամալրի բանակի զինծառայող կանանց շարքերը իգական սեռի ներկայացուցիչների՝ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական վեցամսյա ծառայության ծրագրի շրջանակում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	- 5 - 9 / 0 + 2
Կոտայքի լեռներ	- 6 - 8 / - 1 - 4
Կոտայքի նախալեռներ	0 - 3 / 0 + 1
Գեղարքունիք	- 3 - 5 / -2 - 4
Լոռի	- 8 - 13 / -2 - 4
Տավուշ	- 2 - 5 / - 2 + 1
Արագածոտնի լեռներ	- 0 - 3 / -1 - 3
Արագածոտնի նախալեռներ	- 1 - 3 / 0 + 3
Արարատ	0 + 2 / +3 +5
Արմավիր	- 1 - 3 / + 2 + 5
Վայոց ձորի լեռներ	- 6 - 9 / - 1 - 4
Վայոց ձորի նախալեռներ	- 2 - 4 / +2 + 4
Սյունիքի հովիտներ	- 2 - 4 / + 1 +3
Սյունիքի նախալեռներ	- 6 - 9 / - 2 - 3
ԼՂՀ	- 4 - 8 / - 2 - 4
Երեւան	- 6 - 8 / +3 + 5

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.1.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*